ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/68, 20.05.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Երկնաքեր» ՍՊԸ

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/50» բաց մրցույթ

Գնման առարկան՝ Երևան քաղաքում հրատապ լուծում պահանջող շինարարական աշխատանքների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել պատվիրատուին ընկերության հայտը մերժելու որոշումը դադարեցնել:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԿՆԱՔԵՐ» ՍՊԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
"ЕРКНАКЕР" ООО

20 մայիսի 2020թ. ք. Երևան

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձին

<u>Բողոքաբեր</u> - Արմեն Սերգեյի Դրմոյան, ք. Երևան, Վարդաշեն 8 փ., 39 տուն,

<u>Պատվիրատու</u> - Երևանի քաղաքապետարան, ք. Երևան, Արգիշտի 1,

<u>Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը</u> - ԵՔ-ԲՄԱՇՁԲ 20/50,

<u>Գնման առարկան</u> - Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքում հրատապ լուծում պահանջող շինարարական աշխատանքների ձեռքբերում,

<u>Բողոքի փաստացի և իրավական հիմքերը</u> - <<Երկնաքեր>> ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) հաղթող էր ճանաչվել <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/50>> ծածկագրով մրցույթում և համաձայն Երևանի քաղաքապետարանի 28.04.2020թ. գրության Ընկերությունը պետք է ներկայացներ որակի և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքները:

ՀՀ-ում ստեղծված արտակարգ իրավիճակով պայմանավորված բանկային երաշխիքի ստացման հետ կապված օբյեկտիվ պատճառներով ծագել են մի շարք խոչընդոտներ, ինչի հետևանքով իմ կամքից անկախ պատճառներով բանկում ձգձգվեց երաշխիքների տրամադրումը հետևյալ հանգամանքներով պայմանավորված՝

1. Բանկն առաջին անգամ դիմելուց մերժեց երաշխիքի տրամադրումը Ընկերության միակ հիմնադրի անձնագրի վավերականության ժամկետը ս. թ. մարտի 20-ին՝ արտակարգ իրավիճակի ընթացքում, ավարտված լինելու պատճառով: Միաժամանակ բանկն այդ գործարքը նույնականացման քարտով չկատարեց և պարտադիր պահանջեց երկարաձգել անձնագրի գործունեության ժամկետը կամ փոխել ընկերության կանոնադրությունը՝ դրա մեջ Ընկերության միակ հիմնադրի նույնականացման քարտի տվյալները նշելու համար:

2. ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունում անձնագրի երկարաձգում չկատարվեց, քանի որ հիմնադիրն ուներ նույնականացման քարտ, որի գործունեության ժամկետը մինչև 10.01.2023թ. է: Ստիպված պետք է փոխեինք կանոնադրությունը:

3. Պետական ռեգիստրի գործակալության սպասարկման գրասենյակները չէին գործում և որոշ պարզաբանումներից ու ճշտումներից հետո պարզվեց, որ կանոնադրության փոփոխության համար կարելի է դիմել առցանց Յունիբանկի միջոցով, ինչի պատճառով այդտեղ ևս տեղի ունեցավ գործարքի ուշացում, դիմումն ընդունվեց առցանց:

4. Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակները դիմումներն ընդունում էին առցանց: Այդտեղ բանկի պահանջով պետք է կատարվեր բանկային երաշխիքի ստացման համար գրավադրված գույքի գրավի իրավունքի պետական գրանցում, ինչի հետ կապված ևս ուշացումներ տեղի ունեցան:

<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/50>> ծածկագրով կնքված պայմանագրի 7-րդ կետի համաձայն նույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է նույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են, մասնավորապես, արտակարգ դրություն հայտարարելը:

<u>Վեճի առարկան</u> - հաշվի առնելով վերոնշյալ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված բանկային երաշխիքների ստացման ուշացումը՝ 13.05.2020 թվականին խնդրանքով դիմել ենք Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչություն և հայտնել, որ վեցօրյա ժամկետում կտրամադրենք բանկային երաշխիքները, քանի որ բանկի հետ արդեն ունենք հստակ, վերջնական պայմանավորվածություն, սակայն 14.05.2020 թվականին Երևանի քաղաքապետարանի կողմից ստացել ենք մերժում:

<u>Բողոքաբերի պահանջը</u> – խնդրում եմ պատվիրատուին պարտավորեցնել ընկերության հայտը մերժելու որոշումը դադարեցնել:

Կից ներկայացնում եմ.

1. Պատվիրատուի մրցույթը գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը 1 թերթ,
2. Բանկային երաշխիքները տրամադրելու հավաստման վերաբերյալ բանկից տեղեկանք՝ 1 թերթ,
3. Տնօրենի նույնականացման քարտի պատճենը՝ 2 թերթ,
4. Հիմնադիրի անձնագրի պատճենը՝ 1 թերթ,
5. Հիմնադիրի նույնականացման քարտի պատճենը՝ 1 թերթ,
6. Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը՝ 1 թերթ,
7. Այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին բողոքը բավարարվելու դեպքում պետք է հետ փոխանցվի վճարը՝ 1թերթ,
8. Ընկերության կանոնադրությունից պատճեն՝ 3 թերթ,

Տնօրեն՝ Ա. Դրմոյան

Հայաստանի Հանրապետություն, 375005, ք. Երևան, Տիգրան Մեծի 65 ա mail:erknaqer@rambler.ru Հեռ 091432138